
ՆՈՒՑՆԱԲԱՐԱԴՐԻՉ
ՓՈԽԱՏԵՂՈՒՅԹՆԵՐԸ ՉԱՓԱԾՈ ԽՈՍՔՈՒՄ

ԳԵՎՈՐԳՅԱՆ Ս. Պ.

Նույնաբաղադրիչ փոխաստեղծությունները լայն կիրառություն ունեն թե՛ չափածո, թե՛ արձակ խոսքում: Չափածո խոսքի առումով հարկ է կանգ առնել տաղաչափության երկու պահանջի վրա՝ հանգավորում, բանաստեղծական ոտքի կառուցում:

1. Հանգավորում: Հանգերի որոնման ընթացքում բանաստեղծը կամ թարգմանիչը դիմում է նույնիմաստ փոխաստեղծությունների: Կազմված լինելով միևնույն բաղադրիչների հետևառաջությամբ՝ բառազույգերի անդամներն ունենում են հնչյունապես միմյանց հետ չհամընկնող վերջնավանկեր: Բանաստեղծական տողում այդպիսի վերջնավանկերը երկու տարբեր հանգավորման հնարավորություն են առաջ բերում: Ստեղծագործողին է մնում փոխաստեղծական անդամներից ընտրել այն, որը համապատասխանում է տվյալ դեպքի հանգավորման պահանջին: Վերցնենք որպես օրինակ տերևախիտ-խտատերև նույնիմաստ զույգը: Այ. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի թարգմանիչ Ս. Վահունին թարգմանության մեջ ընտրել է բառազույգի երկրորդ անդամը, որովհետև այն պետք է հանգավորվի նախորդ տողավերջի վերնի բառի հետ.

Նրանց թափանցիկ շիթերից վերև
Սահուն խմբերով զով, **խտատերև**
Սոսիների տակ ըզբոսնում անվերջ ...¹

Թունալի-լիաթույն: Դ. Վարուժանն իր «Օձը» բանաստեղծության մեջ այս զույգից դարձյալ ընտրել է երկրորդ անդամը: Ստորև բերվող քառատողում այն չորրորդ տողավերջում է և հանգավորվում է երկրորդ տողավերջի վարդենվույն բառի հետ.

Ու փաթթելով ինքզինք մատղաշ իրանիս
Իբրև բաղեղ՝ վարդենվույն,
... ուղղեց շրթներուս
Կոր գլուխն իր **լիաթույն** ...²

Հանգավորման պահանջով ելնել-ընկնել և ընկնել-ելնել փոխաստեղծական զուգադրական հարադիրներից Ա. Շեկոյանը գործածել է ելնել-ընկնել-ը:

Հազար անգամ **ելել-ընկել**
Ու չեմ փնտրել իմ թշնամուն,
Դժվար պահին, ինչպես ընկեր
Ինձ փրկել է ձեռքը քամու³ ...

¹ Պուշկին Ա., *Ընտիր երկեր*, Ե., 1985, էջ 244:

² Վարուժան Դ., *Երկերի ժողովածու*, Ե., 1986, հ. 1, էջ 100:

³ Շեկոյան Ա., *Ճոճք*, Ե., 1984, էջ 48:

Այժմ դիտարկենք բառագույզի երկու անդամների գործածության դեպք՝ ցիրուցան-ցան ու ցիր: Երկուսն էլ բաղիյուսական բարդություններ են, եռական է, սակայն բառընտրության պատճառ կա: Եթե առաջինն ընտրել է Մ. Մեծարենցը «Հիշատակ» բանաստեղծության մեջ՝ հանգավորելու անցան բառի հետ, ինչպես պարզ է դառնում ստորև կատարված մեջբերումներից, ապա երկրորդը՝ Վ. Տերյանը՝ համապատասխանեցնելու անիծիր բառին «Լուսաբացին նա բարձրացավ կախադան» բանաստեղծության մեջ:

Մութ ըստվերներ, ծավի լույսեր **ցիրուցան**
Հրպումով մը ազդու՝ եկան ու անցան ...⁴

Ծեր քահանան ոչ մի աղոթք չէր հիշում,
(Միրտը նրա շշնջում էր՝ անիծիր),
Լուսածագի ծիրանավառ մշուշում
Կայծկլտացին ճաճանչները **ցան ու ցիր** ...⁵:

Հանգավորման պահանջով փոխաստեղծական անդամներից մեկի ընտրությունը կարող է կատարվել ոչ միայն մեկ բանաստեղծի համար, այլև ընկած լինել ամբողջ բանաստեղծության կառուցվածքի հիմքում. նույնահանգ բառերը լինում են թե՛ առաջին, թե՛ մյուս բոլոր քառաստորերում: Նշված սկզբունքով կառուցվածքը սովորական է գուսանական ստեղծագործություններում: Հայ դասական գրականությունից ներկա առումով բնորոշ է Հովհ. Հովհաննիսյանի «Աշուղ» բանաստեղծությունը: Այստեղ ընտրությունը կատարված է լիասիրտ-սրտալի գույզից: Թեև բառերում ի ձայնավորի շնորհիվ վերջնականները մոտ են հնչյունապես, բայց գործածված է երկրորդ անդամը՝ իր անկեղծ, սրտաբուխ իմաստով, որն ավելի հարմար է լի վերջնականին ունեցող այնուհետև եկող բառերի հետ: Նախ հանդիպում է առաջին տան երեք տողում.

Ասի՛ աշուղ, առ չունգուրդ, մեզ բան ասա **սրտալի**,
Կարոտ ենք քո անուշ ձենին, մի բան ասա **սրտալի**,
Սրտի խոսք ենք ուզում քեզնից, որ վեր հանի մեր հոգին,
Ա՛ռ չունգուրդ, դարդո՛տ աշուղ, մեզ բան ասա **սրտալի** ...⁶:

Հաջորդ տները վերջանում են համապատասխան լիահանգ բառեր ունեցող տողերով. «մեզ բան ասա վշտալի», «թող խոսքդ ըլնի ցավալի», «խոսքդ ըլնի ողբալի», և ապա նորից՝ «մի բան ասա սրտալի»:

Տողում հանգավորվող բառը փնտրելու ճանապարհին բանաստեղծը կամ թարգմանիչը ևս ստեղծում է որևէ բառի նույնաբաղադրիչ փոխաստեղծությամբ: Ունենալով անհրաժեշտ իմաստը՝ եղած բառը հարմար չէ հնչյունապես, մինչդեռ նորաթուխ փոխաստեղծությամբ, լինելով նույնանիշ, ունենում է նաև պահանջվող

⁴ Մեծարենց Մ., Երկերի ժողովածու, Ե., 1981, էջ 141:

⁵ Տերյան Վ., Բանաստեղծություններ, Ե., 1982, էջ 212:

⁶ Հովհաննիսյան Հ., Երկեր, Ե., 1959, էջ 72:

վերջնականկը, ուրեմն հարմար է հանգավորմանը: Գործածության մեջ դրվող այդպիսի նորակազմ փոխատեղությո՞ր առաջին հայացքից կարող է անսովոր թվալ, որովհետև առաջ է եկել տաղաչափության միայն որոշակի պահանջով և գրականության մեջ նախապես չի հանդիպել: Անդրադառնանք նման մի քանի դեպքի:

Գործածության առումով սովորական է սրաթն ածական-մակբայը՝ այն էլ, մեր համոզմամբ, իր համանունով, որը բառարաններում իբրև այդպիսին չի առանձնացվում: ՄՐԱԹԵՎ 1. - աստիճանաբար սուր ձև ստացող թևեր ունեցող (սուր և թև արմատներից)⁷: Այն իր փոխատեղությային գույզը չունի: ՄՐԱԹԵՎ 2. - արագընթաց, սլացիկ (կազմված առանձին անգործածական սույր արմատի հնչյունափոխված տարբերակից և թև արմատից): Այս բառը բազմիցս գործածված է Հովհաննիսի «Բլիականի»՝ Մկրտիչ Խերանյանի թարգմանության մեջ՝ «սրաթն խոսքեր», «սրաթն հարցում», «սրաթն իջնել», «սրաթն նավ»: Ինչպես. «Եթե Աստղիկ աստվածուհին ... այդ չտեսներ և սրաթն՝ Ոլիմպոսից չիջներ այդտեղ»⁸, «Հիշեք ձեր այն խոսքերը ... որ սրաթն նավերի մոտ ուղղում էիք տրոյացոց»⁹:

Ֆիրդուսու «Ռոստամ և Սոհրաբ» ստեղծագործության թարգմանիչը՝ Սերգեյ Ումադյանը, նույնպես գործածել է այս բառը.

Բայց լավ նժույգ է հարկավոր ...

Որ փղի պես ուժեղ լինի, արծվի նման սրաթն ...

Այստեղ տողերի հանգավորումը կառուցված է aabb սկզբունքով, իսկ հիշատակած տողի հաջորդ տողն ավարտվում է թեթև բառով.

Որ ձկան պես լողա ջրում, լինի վիթի պես **թեթև**¹⁰

Սույր արմատով կազմության համար հմմտ. արընթաց, սրաթոնիչ, սրարշավ, արշավասույր:

«Հողմը սրարշավ ... թերթերը տարավ»¹¹:

«Արշավասույր Դվին մտավ Գնունին»¹²:

Ի տարբերություն Ֆիրդուսու «Ռոստամ և Սոհրաբի», նաև Հովհաննիսի «Բլիականի» թարգմանիչների՝ Վ. Թեքեյանը գործածության մեջ է դրել սրաթն 2 ածականի նույնաբաղադրիչ փոխատեղությո՞ր՝ թևասույր: Եվ ահա թե ինչու: Թարգմանելով ֆրանսիացի բանաստեղծ Թեոֆիլ Գոթիեի «Աղավնիները» բանաստեղծությունը՝ նա կառուցել է հանգավորման՝ aaba հետաքրքրական մի պատկեր: Բոլոր երեք տներում տողերը վերջանում են ան հանգով, ինչպես. վրան, խոլական, առտվան և այլն: Առաջին երկու տան մեջ մեկական տող ունի նույն՝ ուր հանգը՝ փետուր, մաքուր: Եվ

⁷ Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1986, հ. 2, էջ 1337:

⁸ Հովհաննիսի, Բլիական, Ե., 1987, էջ 110:

⁹ Նույն տեղում, էջ 303:

¹⁰ Ֆիրդուսի, Ռոստամ և Սոհրաբ, Ե., 1967, էջ 24:

¹¹ Տեքյան Վ., Երկերի ժողովածու, 1960, հ. 1, էջ 73:

¹² Խաչատրյան Հ., Քերթողահայրը, Ե., 1985, էջ 128:

ահա սրանց հանգավորման պահանջով երրորդ տան մեջ գործածված է թևասույր փոխաստեղծությամբ: Այն բառարաններում չի ներառված: Մեջբերենք վերջին երրորդ տունը.

Հոգիս ծառն է: Ամեն գիշեր իր վրբան
Ճերմակ հույլեր տեսիլքներու խոլական
Երկինքեն վար կը թափփին **թևասույր**
Ու կը թռին, երբ ծագե լույսն առտըվան¹³:

Ե. Չարենցի «Մասունցի Դավիթը» պոեմում հանդիպում ենք աղեղ ու նետ վերլուծական բարդությանը, թեև սովորականն է՝ նետ ու աղեղ:

Վերցրեց-առաւ **աղեղ ու նետ**,
Որ զնա՝ Սարա արքայի հետ
Մղի պատերազմ մի չարաղետ¹⁴:

Այստեղ էլ փոխաստեղծության պատճառը նետ, հետ և չարաղետ հանգավոր տողերն են:

Չափածոյում հանգի համար փոխաստեղծության են դիմում ոչ միայն տողավերջում, այլև տողամիջում՝ ներքին հանգի համար: Բերենք այդպիսի մի նմուշ:

Գ. Էմինը «Շուրջս շողում է» բանաստեղծության մեջ երգ-կատակ և կատակերգ փոխաստեղծության ընտրել է երգ-կատակը, այն տողամիջում հանգավորման համար հարմար է հաջորդ տողամիջի պչրանք բառի հետ.

Երգ-կատակի տեղ՝ հոգնություն ու ջանք,
Խենթ պչրանքի տեղ՝ ամոթխած շոյանք¹⁵:

2. Բանաստեղծական ոտքի կառուցում: Հայտնի է՝ տաղաչափության մեջ տողում վանկերի ավել կամ պակաս լինելը վճռական նշանակություն ունի: Ուստի բանաստեղծը կամ թարգմանիչը նույնիմաստ անդամներով փոխաստեղծություն ևս ընտրում է այն բառը, որը համապատասխանում է ոտքի, կիսատողի, հատածի պահանջներին: Այժմ տեսնենք, թե նյութի քննության առումով վանկային ինչ տարբերությունների հետ կարող ենք գործ ունենալ: Նույնաբաղադրիչ փոխաստեղծությունները միմյանցից մեկ վանկով տարբերվում են, եթե.

ա. Դրանցից մեկը բառաբարդված է հոդակապով, մյուսը՝ առանց հոդակապի: Այսպես. արձակահեր, բերանափակ, հազարաբյուր անդամները մեկ վանկ ավել ունեն իրենց զույգերը կազմող անդամներից՝ հերարձակ, բերանփակ, բյուրհազար, որոնք չունեն «ա» հոդակապ: Նույն կերպ՝ սայրասուր-սուրսայր, բոլորաշուրջ-շուրջբոլոր, սրբաբաց-բացսիրտ զույգերում, որոնցում երկրորդ անդամներն անհոդակապ են:

Իրողությունն առավել տարածված է այն բառաբարդություններում, որոնք, իբրև երկրորդ բաղադրիչ, ունեն ձայնավորով կամ ե երկհնչյունով կամ ո

¹³ Ֆրանսիական պոեզիա, Ե., 1984, էջ 232:

¹⁴ Չարենց Ե., Երկերի ժողովածու, Ե., 1987, հ. 3, էջ 17-18:

¹⁵ Էմին Գ., Երկերի ժողովածու, 1985, հ. 2, էջ 240:

հնչյունակապակցությամբ սկսվող արմատ: Ինչպես. ազատական-կամազատ, աչագեղ-գեղաչ, իմաստախոր-խորիմաստ, ունայնաձեռնություն-ձեռնունայնություն, օրորաքայլ-քայլօրոր: Եվ. երերաքայլ-քայլերեր, երախաբաց-բացերախ, ոտնաթեթն-թեթնոտ, որսագող-գողորս, որոշագծել-գծորոշել:

բ. Եթե անդամներից մեկում կա այնպիսի հնչյուն կամ երկհրն- չյուն, որը մյուս անդամում ուղղակի սղված է, չի փոխարկված գաղտնավանկ ը-ի: Ինչպես. գեղաժպիտ-ժպտագեղ, լանջահովիտ-հովտալանջ, առատաձյուն-ձնառատ, պատալյուր-ալրապատ:

Բառագույգում անդամները միմյանցից տարբերվում են երկու վանկով, եթե դրանցից մեկը բառաբարդված է ա հոդակապով՝ ի տարբերություն մյուսի, և ունի այնպիսի հնչյուններ, որոնք սղված են մյուսում: Վերջին հանգամանքը վերաբերում է նաև գաղտնավանկ ը-ին, որը վանկարար է, ուստի մյուս անդամում դրա վերանալը պատճառ է դառնում մեկ վանկի կրճատման: Այս կերպ արժանապատիվ, ավագամրրիկ, առատապտուղ, որսաթռչուն բառերը, համապատասխանաբար ի, ու հնչյուններն ունենալով, երկու վանկով ավելի են պատվարժան, մրրկավազ, պտղառատ, թռչնորս բառերի իրենց զուգանդամներից: Իսկ ունայնաձեռն, առատաձյուն, ալյուրախառն, երանգախառն բառերը, ունենալով ա հոդակապ, գաղտնավանկ ը, իրենց հերթին երկու վանկով ավելի են ձեռնառատ, խառնալյուր, խառներանգ բառերից, որոնցում երկրորդ դիրքում ձայնավորով սկսվող արմատներ են, ուստի չունեն ա հոդակապ, չունեն նաև գաղտնավանկ ը: Նույնաբաղադրիչ փոխատեղությունների անդամներում մեկ վանկով տարբերվելն առավել տարածված է, քան երկու վանկով տարբերվելը:

Եվ, վերջապես, ինչպես կտեսնենք ստորև, փոխատեղությունները կարող են հավասար քանակի վանկեր ունենալ և, այդուհանդերձ, տարբեր դեր խաղալ տողի ներքին կառուցվածքում:

Այժմ այն մասին, թե վանկերի թվի հետ կապված, նույնաբաղադրիչ փոխատեղություններն ինչպես են անդրադառնում բանաստեղծական տողի վրա: Նախ նշենք, որ քննվելիք դեպքերում բառագույգից ընտրությունը կատարվում է ոչ թե տողավերջի, այլ ներքին տողի համար: Քանի որ հայ տաղաչափության մեջ հիմնականում գործածված են երկվանկ (քորեյ, յամբ), եռավանկ (ամֆիքրաքոս, անապեստ), պակաս հաճախ՝ քառավանկ (պետն) բանաստեղծական ոտքերը, ուստի ստեղծագործողը վերցնում է հենց այս ոտքերին հարմար բառանդամը: Մեջբերենք Գ. Էմինի՝ Արուս Ոսկանյանին նվիրված բանաստեղծությունից հետևյալ քառատողը.

Կարծես դեռ ժպտում ես մեզ գերած
Կամ բեմում գեղիքան նագում ես,
Ամեն դեր քեզ համար էր գրված,

Ամեն դեր քեզ այնպես սազում էր¹⁶:

Որովհետև ամբողջ բանաստեղծությունը գրված է եռավանկ ոտքերով, այստեղ՝ երկրորդ տողում, իրանագեղ և գեղիքան նույնիմաստ անդամներից ընտրվել է երկրորդը. այն անապեստ է (քառատողում կան և ամֆիբրաքոսներ), իսկ իրանագեղ-ը քառավանկ է և հարմար չէ:

Վ. Տերյանն իր “*Fatum*” բանաստեղծության մեջ զանգրագեղ և գեղազանգուր զույգից վերցրել է երկրորդը՝ քառավանկը.

Մեղմ գիշերի գեղազանգուր երազում

Այն աստղերը, որպես մոմեր սրբազան ...¹⁷

Այս անգամ այդպիսին էր ոտքի պահանջը:

Այժմ բառընտրությունը դիտարկենք յամբ-անապեստով գրված բանաստեղծական տողերում: «Զինվորի վերադարձը» բանաստեղծության մեջ Գ. Էմինը գրում է.

Փովել են Նորքի այգիներն իմ դեմ,

Ինչպես խնջույքի մրգառատ սեղան¹⁸:

Երկրորդ բանատողի մրգառատ բառի փոխաստեղծությամբ զույգն է՝ առատամիրգ, որը, սակայն, քառավանկ լինելով, հարմար չէ անապեստյան եռավանկ ոտքի համար: Այն կիսախտի տաղաչափական կշռությամբ, հավասարաչափ բաշխված յամբ-անապեստ ոտքերի քանակը:

Բառընտրությունը փոխաստեղծություններից կատարվում է ոչ միայն բանաստեղծական ոտքերի, այլև հատաձի պահանջով: Համաբարդ բառը չի կարող մասնատվել, նրա մեկ կամ երկու վանկը չի կարող առանձնանալով լինել տարբեր կիսատողերում: Մա պոեզիայում մերժելի է՝ կշռության խախտման, անհրաժեշտ դադարի ոչ տեղին լինելու, բառաշեշտը հատաձից հետո տեղափոխվելու պատճառներով: Թե՛ ստեղծագործողը, թե՛ թարգմանիչը խստորեն հետևում են նշված պահանջներին.

Եվ հնչյուններն ազատակամ քնարիս

Մոլորավների նիրհն են ահա խռովում¹⁹:

Այստեղ տեսականորեն կարող էր լինել նաև այսպիսի տարբերակ. ազատակամ-ի փոխարեն բաղաձայնով սկսվող նույնիմաստ կամազատ փոխաստեղծությամբ, որը պատճառ կդառնար, որ նախորդ հնչյուններն բառը ն-ի փոխարեն ընդունեք որոշյալ ը հոդը (Եվ հնչյունները կամազատ քնարիս): Սակայն նկատելի է, որ ըր վանկն անցնում է հատաձից աջ կիսատողը, որպեսզի լրացնի, և առաջանա անհրաժեշտ քառավանկ ոտքը: Տաղաչափությունը խախտվում է, ուստի թարգմանիչն իրավացիորեն ընտրել է ն հոդը և ձայնավորով սկսվող քառավանկ ազատակամ բառը:

¹⁶ Էմին Գ., նշվ. աշխ., հ. 1, էջ 45:

¹⁷ Տերյան Վ., Բանաստեղծություններ, էջ 6:

¹⁸ Էմին Գ., նշվ. աշխ., էջ 130:

¹⁹ Գարուն, N 9, 1979 (Պուշկին Ա., Այն երկրում, ուր ...):

Եթե համաբարդության մասնատումը երկու կիսատողերի միջև չափաձեռնում մերժելի է, ապա զուգադրական հարադրությունների այդպիսի բաժանումը թույլատրելի է: Վերջիններս, բաղկացած լինելով դեռևս ինքնուրույնությունն ամբողջովին չկորցրած համագոր բառերից, անհրաժեշտ դադարի հնարավորություն են տալիս. առաջին բառը մնում է հատաձիգ ձախ, իսկ երկրորդն անցնում է հատաձիգ աջ: Առաջ է գալիս ստորակետով անջատվող միավորների լեզվական տպավորություն: Ավելին, բանատողի կառուցման նպատակով ստեղծագործողն ինքը երբեմն սովորական զուգադրական հարադրության փոխարեն փոխաստեղծությամբ է կազմում, որն ունենում է հազվադեպ կամ նույնիսկ միադեպ գործածություն: Այդպիսի անսովոր կազմությունը ևս բաժանվում է կիսատողերի միջև: Բերենք օրինակներ:

Խոսքում սովորական է ձյուն-ձմեռ զուգադրականը.

Ինչքա՞ն շատ են ծիտիկները,

Ձյուն-ձմեռին

Ծառի ծերին

Թռի-վռի են անում²⁰:

Այստեղ ձմեռին բառի ոին վանկով վերջանում է տողը, հանգ է կազմում ծերին բառի հետ: Բայց հեղինակը իր «Ձնծաղիկ» բանաստեղծության մեջ կազմել է ձմեռ-ձյուն անսովոր փոխաստեղծությամբ.

Իսկ ես այնքան եմ սպասել

Իմ գարնանը, իմ արևին

*Մինչև **ձմեռ-ձյուն** եմ դարձել²¹:*

Այս փոխաստեղծությամբ հանգավորման համար չէ, այլ ոտքի: Եթե դարձյալ գործածվեր ձյուն-ձմեռ, մեռ վանկը կգնար հատաձիգ աջ՝ անսովոր դադարով:

Պ. Սևակի երկու տարբեր բանաստեղծություններից բերվող հետևյալ հատվածներում համեմատենք թանկ-էժան և էժան-թանկ զուգադրական ածականների կիրառությունը:

*Այս շարժիչների **թանկ-էժան** դարում*

Նավթի փոխարեն ջուր էին վառում ...²²

Մոռանալով հաշվի առնել,

Թե կոլխոզի, գյուղի համար

*Որքան **էժան-թանկ** կնստի ...²³*

²⁰ Հարությունյան Ս., Ընտիր երկեր, Ե., 1988, էջ 174:

²¹ Նույն տեղում, էջ 108:

²² Սևակ Պ., Երկերի ժողովածու, Ե., 1973, հ. 7, էջ 148:

²³ Նույն տեղում, էջ 21:

Առաջին հատվածում թանկ-էժան անդամը աջ կիսատողում է, առանձին անապեստով ոտք: Ըստ էության, հնարավոր է գործածել նաև էժան-թանկ անդամը, որ նույնիմաստ է և, բնականաբար, վանկերի թվով հավասար: Միայն ոտքի ներսում շեշտի տեղի փոփոխությունից անհարթություն կլինի: Երկրորդ հատվածում էժան-թանկ անդամը մասնատված է հատածից ձախ և աջ կիսատողերի միջև: Յամբեր են: Այստեղ թանկ-էժան-ը գործածել հնարավոր չէ: Երկվանկ ոտքի պահանջով էժան բառի է վանկը կմնա ձախ, իսկ ժան վանկը կգնա աջ կիսատող (Որքան թանկ-է/ժան կնստի):

3. Հանգավորում և բանաստեղծական ոտքի կառուցում միատեղ: Այժմ անհրաժեշտ է կանգ առնել բառագույյզ կազմող այնպիսի նույնաբաղադրիչ փոխաստեղծությունների վրա, որոնց գործածությունը հավասարապես կարևոր է թե՛ առաջին, թե՛ երկրորդ կետերի առումով: Սա նշանակում է, որ ընտրության ենթակա նույնիմաստ փոխաստեղծությունների անդամները միմյանցից միաժամանակ տարբերվում են թե՛ վանկերի թվով, թե՛ վերջնավանկերի հնչյունակազմով: Անդրադառնանք այդպիսի բառերից պատվարժան և արժանապատիվ գույզին: Երկրորդ անդամը երկու վանկով ավելի է առաջինից, տարբեր են վերջնավանկերը: Ա. Պուշկինի «Քնած դշխուհու և յոթ քաջերի հեքիաթի» հետևյալ հատվածում (թարգմանիչ՝ Ա. Խնկոյան) գործածված է առաջին անդամը:

Մեծը ասաց. Վարդի բույր

.....

Ընտրիր որս է քեզ արժան:

«Օ՜, դուք քաջեր պատվարժան

Իմ եղբայրներ սիրասուն ...»²⁴:

Թարգմանությունը կատարված է յամբ-անապեստով: Երկրորդ տողի քեզ արժան անապեստյան ոտքին հաջորդ տողում, բնականաբար, հարմար է պատվարժան փոխաստեղծությո՜ր՝ նույնպես եռավանկ՝ հանդես գալով տողավերջում և անհրաժեշտ հանգավորմամբ: Հե-տևաբար, արժանապատիվ փոխաստեղծությո՜ր կխախտեր թե՛ ոտքերի նույնությունը, թե՛ հանգավորումը: Նախորդ կետում ոտքերի առնչությամբ հիշատակած գեղիքան փոխաստեղծությո՜ային անդամը այժմ ըստ երրորդ կետի գործածության.

Հազար ամպրոպ է մտրակել նրան,

Թե բարդի լիներ՝ մոխիր էր դարձել,

Չինարի չեղավ՝ ճոխ ու գեղիքան,

Հող չկար այդքան՝ շուքը տարածեր²⁵:

²⁴ Պուշկին Ա., նշվ. աշխ., էջ 345:

²⁵ Էմին Գ., նշվ. աշխ., հ. 1, էջ 41:

Բանաստեղծությունը գրված է խառն յամբ-անապեստով, *abab* հանգավորման սխեմայով: Առաջին տողում հատածից հետո անապեստ, ապա յամբ ոտքեր են, երրորդ տողում հատածից հետո՝ յամբ, ապա անապեստ: Նրան բառին համապատասխանում է, բնականաբար, ոչ թե քառավանկ իրանագեղ փոխատեղությո՜րը՝ տարահունչ վերջնավանկով, այլ հենց նմանահունչ եռավանկ գեղիրան-ը՝ ճոխ ու յամբը անապեստով լրացնելու համար:

Նույնական ոտքեր ու հանգավորում փնտրելու գործընթացում պատահում է, որ ինչ-ինչ բառեր հարմար են գալիս իմաստով, իսկ վանկերի թվով ու վերջնահանգով չեն համապատասխանում: Այդժամ ստեղծագործողը կազմում ու գործածում է շրջանառության մեջ եղող անհամապատասխան բառի նույնիմաստ ու նույնաբաղադրիչ փոխատեղությո՜րը, եթե այն բավարարում է տաղաչափության պահանջները: Այսպես, Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի թարգմանիչ Ս. Վահունին այդ կերպ էլ վարվել է՝ հանդիպելով դաշտահովիտ բառի գործածության անհրաժեշտությանը: Սակայն տողում այն չէր տեղավորվի, ինչպես կերևա քիչ հետո բերվելիք հատվածում: Թարգմանիչը կազմել է հովտադաշտ փոխատեղությո՜րը, որը միադեպ է: Լինելով իսկական համաբարդություն՝ բառարանագիրների կողմից մնացել է աննկատ:

Պայծառ են այնտեղ բլուր թե անտառ,
Խաղողի սաթը՝ հակինթները վառ,
Հմայքն հյուրընկալ **հովտադաշտերի**,
Զովը և՛ ջրի, և՛ բարդիների²⁶:

Հանգավորումը կատարված է *aabb* սխեմայով: Աջ կիսատողերում հինգական վանկեր են: Դաշտահովիտների բառում, որ գործածության առումով սովորական է, մի վանկ ավել է: Ի ձայնավորի սղման հետևանքով հովտադաշտերի փոխատեղությո՜ւմ այդ վանկը վերանում է:

Քննությունը շարունակելով՝ այս անգամ անդրադառնանք բառազույգերի երկու անդամին էլ և ցույց տանք, թե դրանք ըստ հարկի ինչպիսի գործածություն են գտնում, յուրաքանչյուրը՝ իր տեղում:

Արշավասույր և սրարշավ: Առաջին անդամը Վ. Թեքեյանի «Առիթները» բանաստեղծության մեջ գործածված է բանատողի ներսում՝ իբրև 4-րդ պեոն, երկրորդը՝ Ավ. Բասհալյանի կողմից՝ իբրև անապեստ՝ նաև տողավերջի տարավ բառի հետ հանգավորման համար:

Ո՜վ առիթներ, որ կուգաք **արշավասույր** և կանցնիք ...²⁷

Ապա.

Եվ արծիվ մի սև իջավ **սրարշավ**
Եվ սիրտս կոցեց, և սիրտս տարավ²⁸:

²⁶ Պուշկին Ա., նշվ.աշխ., էջ 258:

²⁷ Թեքեյան Վ., Երկեր, Ե., 1955, էջ 39:

²⁸ Բասհալյան Ա., Բանաստեղծություններ, Ե., 1985, էջ 214:

Եվ վերջապես մի մանրամասն ես՝ կապված ոտքի ու հանգավորման հետ երկուստեք՝ այս անգամ բանաստղի ներսում: Մեջքերենք Ս. Կապուտիկյանի «Հեգնախառն ձոն ծերությանը» բանաստեղծությունից հետևյալ հատվածը.

Ու կամաց-կամաց հասկանալ, զգալ,
Որ արդեն տալիք-առնելիք չունես,
Որ կյանքում արդեն անելիք չունես ...²⁹

Հատվածում պետք է լիներ հենց տալիք-առնելիք գուգադրական հարադիրը և ոչ նրա նույնիմաստ փոխաստեղծությունը՝ առնելիք-տա- լիք-ը: Վերջինս չէր բավարարի տաղաչափական ներկա դեպքի պահանջները: Այստեղ յուրաքանչյուր կիսաստեղծում կա մեկ յամբ և մեկ անապեստ՝ հինգ վանկ: Երկրորդ տողի ձախ կիսաստեղծում կա մի անապեստ՝ որ արդեն. քանի որ առնելիք-ը նույնպես եռավանկ է՝ անապեստ, ուրեմն չի տեղավորվի կիսաստեղծում: Հարկ կլինի լիք վանկը տանել հատածից աջ՝ ջարդելով տողը և մասնատելով բառը: Տալիք բառը երկվանկ է, ինչը և պետք է ձախ կիսաստեղծում: Եվ գրվիսովորը. գուգադրական բարդություն ունենալով՝ հնարավոր է առնելիք երկրորդ բառը տանել հատվածից աջ կիսաստեղծ՝ չունես յամբի հետ՝ կազմելով ներքին հանգ երրորդ տողի անելիք բառի հետ:

Վերջին մեջքերումը յուրովի ամփոփիչ օրինակ էր չափածո խոսքում նույնաբաղադրիչ փոխաստեղծությունների կիրառությունների վերաբերյալ մեր ասելիքի համար:

СЛОВА С ИДЕНТИЧНЫМИ ПЕРЕСТАНОВОЧНЫМИ КОМПОНЕНТАМИ В ПОЭЗИИ

ГЕВОРГЯН С. П.

Резюме

Слова с идентичными перестановочными компонентами (ИПК) широко используются и в прозе, и в поэзии. В поэтическом тексте исходной точкой служат три метрических требования: рифма, конструкция стихотворной стопы и цезура. В поэтических произведениях велика роль семантически однозначных слов. В процессе творческого поиска рифм и стоп автор или переводчик из лексической пары выбирает тот перестановочный член, который соответствует по количеству слогов и сходству фонетических групп. При отсутствии подобных автор сам образует новое слово с ИПК. Такого рода новообразования нередко встречаются в произведениях Паруйра Севака.

Словообразование перестановочным способом служит одним из источников пополнения синонимического пласта лексики.

²⁹ Գրական թերթ, 23.VI.2000: